

Հանեալս. 21, գ. Հերակղիա Թուսկա. 29, ժա. այլ յԱստուծոյ. ժր. նշանակեալ կրեցին. 30, ա. Պափնութիւնէ. դ. վերաօրիւր ակնն. 33, բ. ի քաղաքացն Կիպրոսի. 36, ե. նոր Թեոզոսի. 37, ե. այժմ ածեալ. բ. ի մահուանէ. ժե. բերէ մեզ ներումն (տես Սոկր. էջ 929). 41, ե. յոյն բն. «ի վիճակ ընկալաւ զաթոս». 44, գ. միայն պէտք է կարգալ՝ «յասպարիսի նորին քաղաքիս», 54, ժր. որպէս և Մովսէս յանապատին առնէր. 55, գ. զկոչեցեալն. 78, գ. 80, ժ. պատմեցից. 93, ե. հրամայեաց ... տան. 101, գ. Ազամանգայ. գ. յափշտակելով. 103, ժե. հակառակ նոցա կամելով.

Աւրեմն ընդամենը 21 անգամ, որոնցից միայն մի քանիսն են անպայման ընտիր ընթերցուածներս մինչդեռ եր. բոլորն էլ լաւ են և գերազանելի. գ. Աստիածելի և երկուսն էլ հնարաւոր են ըստ յոյն բնագրի հետեւեալ գէպքերում. 12, ժր. 24, բ. 42, բ. Այստեղ վերջի մեծ նախադասութիւնը չկայ բնագրում. 44, բ. 50, բ. այս նախադասութիւնն էլ չկայ բն. 53, գ. 58, գ. բնագիրն ունի «սպգակից մանկութեան». 67, ժգ. 68, գ. բ. 84, ա. 94, գ. 95, ժգ. 104, բ. Աւրեմն 14 անգամ.

դ. Տպագրական սխալներ են. չուղղուած՝ 18, ժգ. 66, բ. 72, ժգ և արդէն ուղղուած՝ 36, գ. ժգ. 42, ժա. 64, դ. ժգ. 88, ժա. Աւրեմն 9 անգամ.

ե. 2, գ. ժգ. մե. դանտուում են այն հատուածի մէջ, որ առեւ իմ «Արշալոյս Արարտեանս» թերթից, իսկ սա էլ առեւ է Երուսաղէմի ձեռագրից. ուրեմն մի երես արտագրութեան մէջ նոյն եր. ձեռ. երեք սխալ են մտել.

Պարզ է որ երկու ձեռագրերի միջի կապը որոշելու համար կարող են հինգ կէտից միայն առաջի երկուսն ինկատի առնուիլ, եթէ մեր ձեռ. բ. կէտում նշանակած տարրերութիւնները չլինէին, կարելի էր պնդել որ նա արտագրուած է եր. ձեռագրից, հակառակը լինել չէ կարող, բայց դրա փոխարէն համարեա հաստատու պէս կարող ենք պնդել որ երկուսն էլ միեւնոյն, կամ յոյրոյիկն յար և նման ձեռագրից են արագրուած. Երաւս. ձեռ. աւելի լաւ, ընտիր գրչի ձեռքով, իսկ մերը անհամեմատ թոյլ գրչից, Այս եզրակացութիւնը մենք անում ենք ի նկատի առնելով տարրերութիւնների յատկութիւնները. նոցա մեծ մասը կայանում է նրանում, որ եր. աւելի աստի ունի կամ աւելի ուղիղն ասած այնքան բառեր չունի բաց թողած ինչքան մեր ձեռ. մի հանգամանք որ կը բացազրուի մեր ձեռ. գրչի անուշադրութեամբ և սգիտութեամբ. համեմատել օրինակի համար 12, ժե. և 13, ա.: Հաս քիչ են տարրերութեան այնպիսի օրինակներ, երբ նոյն միտքը տարրեր բառերով է ար-

տայայտուած, որով կարելի լինէր ասել թէ ձեռագրերից մէկը կամ միւսը ներկայացուցիչ է մի յայտնի՝ զիտակցօրէն փոփոխուած նախատիպի ինչպէս օրինակի համար այդ տեսնում ենք Փոքր Սօկրատի ձեռագրերի մէջ (տ. յառ. ԷԵ), Յայտնի աչքի ընկնող օրինակները, երբ նոյն մտքի համար տարբեր բառեր են գործածուած, այն էլ ամէն անգամ միայն մի մի բառ՝ սորա են. 24, ժգ. 35, բ. 37, բ. 41, ե. 42, ի. 44, բ և 72, բ. որոնցից և ոչ մի օրինակը այնքան նշանաւոր չէ որ հնարաւոր կացուցանէր երկու իմբերի ընդունելութիւնը, եթէ միւս գրքերի բաղդատութիւնն էլ ունենանք գոյցէ երևան դան աչքի ընկնող կէտեր, բայց առ այժմ դեռ չունինք այդ, և ձեռագրի մի քանի առեւ կամ պակաս բառերը դեռ սպացոյց չեն՝ թէ նոքա նոյն օրինակից չեն. ի հարկէ մեր ենթադրութեան այն մասը թէ արդեւ, ք. եր. և էջ. ձեռ. միմեանցից արտագրուած չե՞ն (յառ. ԻԿ.) արդէն անհիմն է դարձել.

Մի նշանաւոր թերութիւն կայ մեր ձեռ. մէջ, որ շատ կարող էր նպաստել ընդհանուր նախատիպը զանելուն. նրա մէջ մի թերթ մտքուր է թողնուած՝ էջ 371—372-ի մէջ (տպ. 615—619),՝ որովհետեւ նախատիպի մէջ ուղիղ այդքան պակասում էր և գրիչը այդ իմանալով ազատ թերթ է թողել յետոյ լրացնելու յոյսով և ընդմիջտ այդպէս էլ մնացել իսկ մենք ստիպուած եղանք բնագրից թարգմանել, Հետաքրքիր է իմանալ, արդեւ, կայ նոյն թերութիւնը եր. ձեռ. մէջ թէ ոչ, եթէ այդ այդպէս լինէր, կայացուցուէր երկու ձեռ. շատ մօտ կապը, թէև տունց այդ էլ, ինչպէս տեսանք, միմեանցից շատ հեռու չեն.

Աւրեմն առ այժմ Սահակ Սրբազանի յայտնած կարծիքների մասին կարող ենք ասել. ուղիղ է որ եր. ձեռ. աւելի ընտիր օրինակ է, բայց մեր ձեռագրից տարրեր նախատիպ չունի, Բացի այդ՝ նրա տուած համեմատութիւնից ստորում ենք մի նշանաւոր և հետաքրքիր բան, թէ թարգմանութեան շատ սխալները և թերութիւնները արտագրողներն է և ոչ թարգմանչիւնը.

Մեարդու Վարդապետ.

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑՈՒ ՊԵՏՄԵՆԸ ՎԵՊԵՆՆՈՒԹԵՆ.

Արարատ, ամսագրի ներկայ թուականիս ապրիլ համարում մենք հրատարակեցինք Գրիգոր Խլաթեցու (+1425) անտիպ երկե-

1. Shu hil k'rms. Սոկ. յառ. էջ ԺԵ. ծճ. 1:

1. ա. Սոկր. յառ. Ի. ԵԼ.

րից մէկը՝ այն է մի չափական պատմական վիպասանութիւն Լանկթամուրի և նորա յաջորդների ժամանակից՝ «Յիշատակարան աղէտից» վերնագրով: Այնուհետև պատիւ ունեցանք ստանալ Երուսաղէմի Ս. Յակովբեանց միարան Գերապատիւ Սահակ եպիսկոպոս Խապոյեանից իրենց վանքում գտնուած գրչագրի նոյն վիպասանութեան ընդօրինակութիւնը, որ՝ չնայած պակասների ու վրիպակների, այնուամենայնիւ արժանի է ուշագրութեան իւր մի քանի հետաքրքրական ընթերցուածներով:

Նախ՝ մեր վիպասանութիւնը Երուսաղէմի գրչագրում այլ խորագիր է կրում — «Պատմութիւն Լանկթամուրին» փոխ. տպ. «Յիշատակարան աղէտից»: Յետ այնօրիկ՝ նրա մէջ պակասում են տպագրի հետեւալ տողերը — 21—22, 111—2, 125—6, 133—4, 141—2, 146—8, 154—5, 323—4, 395—400, 409—410 և վերջին 4 խորհրդաւոր տողերը — Որ ետ ինձ կար տըկար անձին, — Եւ զեչն ու զնուն հասոյց ի մին, — Բամեալ զգանձերս որ ի միջին — Եչն առաջին և նուն յետին»: — Այդ պակասների փոխարէն Երուսաղէմի գրչագիրը աւելի ունի տպագրից — 110րդ տողից յետոյ՝ «Հեռաւորս ընթանային» — Ետար վտարէին», 304րդ տողից յետոյ՝ «Նրեսուն և հինգ բիւր Շահաութին» — Զօրքն ամենայն ի միասին», և 364րդ տողից յետոյ՝ «Ի տարեկից իւր փախստին» — Որ ի ձեռացն Զաղաթին» — Տարընը ընթերցուածքներից յիշելու է առաջիկայ կարեւորագոյնները, 8րդ տողում՝ անձկական (տպ. անժամական), 10 սուրը Յարութեան (տպ. աւր Յ.), 23 Անթիւ Քեսա որ գործեցան (որ հաստատում է մեր արած ենթադրութիւնը), 33 Ընդ այն, ընդ այս (տպ. Ընտ ընա այս), 38 ձայն ուժգին (տպ. գուժին, որ աւելի պատշաճ է), 42 Հազար որդիք Աբրահամին (տպ. Աւար ո. Ա.), 49 Զայլս սրոյ ճարակ տուին (տպ. աւելի պատշաճ՝ Զարս . . . զկանայս), 51—52 Զոմանց գլուխըն կտրէին, Հանդերձ աշօքն քերթէին (տպ. գլ. քերթէին, և հերաւքն խըլէին), 64 Տիգրիս (սխալ ընթերցուած՝ փոխ. տպ. Տըփիս), 65 Զարքատ Բաղրատ (սխալ ընթ. փոխ. տպ. Զարքայն Բաղրատ), 68 Եւ Տիգրան (սխալ ընթ. փոխ. ի Մուղան), 71 ԶԱրարատեան գրեական (սխալ ընթ. փոխ. տպ. զՈրոտայն գր.), տպ. 69—88 տողերը Երուսաղէմի գրչագիրը զեւեղում է 242րդ տողից յետոյ՝ 89 Եւ զկարտտից ամուրն ապին (հետաքրքրական մանրամասնութիւն է, որ չունի տպագրիւրը), 116 Եւ ոչ սրլէին սրլէխփորին (սրլէխ = զէնք, տպ. տըրէխ հետեւակին), 119—122 տողերը Եր. գրչագիրը յետ ու առաջ է գնում՝ 121, 122, 119, 120. — 123 որ պէտք բազմաց էին (տպ. որ պէտք անուանէին), 128 Մին պաւաւոյ ակնածէին (տպ. մին պատաւոյ ա.), Եր. գրչ. ունի տարբեր դասաւորութիւն առաջիկայ 6 տողերի՝ 149, 143, 144, 145, 140, 119. — 168 Զթողում ասել (տպ. թողում ա.), 235 և 297 Լանկթամուրին (տպ. Միրթամուրին), 259 Էր էմութին (այսինքն՝ ապահովութիւն թէմին թուրք բառից. ծանօթութիւն զեր. Սահակ եպիսկոպոսի), 282 — 287 տողը Եր. գրչ. տարբեր է դասաւորում՝ 282, 285, 286, 283, 284, 287. — 288 Բարձին զգէչն յԱրձէշ ընթին (հետաքրքրական մանրամասնութիւն, որ չկայ տպագրում), 317 խրտան (որ հաստատում է մեր արած ենթադրութիւնը), 402 ոչ հաղորդին (տպ. ոչ գրամ թողին), 417 ըզլլաթեցիս (տպ. Սլլաթացիս), 421 Որ գրէի ողբերգակիս (տպ. ո. գ. գրան ողբիս):

Մեր վիպասանութիւնից անմիջապէս յետոյ Երուսաղէմի գրչագիրը ունի և մի այլ չափաբերական համառօտ գրուածք՝ 60 տողից բաղկացած, նոյնպէս պատմական բովանդակութեամբ՝ հեղինակութիւն ոմն Գրիգորի — «Բանիս երգող Գրիգոր ասին»: Բայց չնայած Գրիգոր անուան՝ զա Գր. Սլլաթեցու գործը չէ. գրուածքի սկզբում յիշուած են Շահ-Թահմազ Ա. և իւր հայր՝ Շահ-Նամայիլ Ա. որոնք թագաւորեցին Պարսկաստան 1500 — 1575 թուերին, այսինքն Գր. Սլլաթեցուց աւելի քան մի դար յետոյ:

* * *

Թոյլ ենք տալիս մեզ ներկայ նկատողութեանը կցել և մի երկու տող նորերս «Ազգադրական Հանդիսի» Բ. գրքում լոյս տեսած

Գր. Խլաթեցու մի այլ չափաբերական գրուածքի առթիւ: որի մասին լոկ ենթադրութիւն էինք արեւ Հարեանցի մեր ծանօթութիւններէց մէկում («Արարատ», 1897, ապրիլ, էջ 174): Ազդագրական նիւթերի անխնջ հաւաքող պ. Ս. Լալայեան՝ նկարագրելով Զաւարթ գաւառում գտնուած հայ գրչադրերը, յիշում է ի միջի այլոց և Գեղիսայ դիւղի ԺԳ. դարու մի Աւետարան՝ որի վերջում ընդօրինակողի կողմից գրուած է ընդարձակ Յիշատակարան և մի ոտանաւոր «Որ ի ՂԵՃողէս բան» (Ազգ. Հ. էջ 281—284): Թէ՛ յիշատակարանը և թէ՛ ոգրը գրուած են Հայոց ՊՊՏԲ—1393 թուականին ձեռամբ «յրբնամեղ, պիտակ անուն վարդապետ» Գրիգորի, որ մեր կարծիքով Գր. Խլաթեցին պէտք է լինի:—Ինչպէս երևում է յիշատակարանից, Աւետարանի ընդօրինակութիւնը սկսուած է Բաջրերունեաց Արճէշ քաղաքի մօտերը գտնուած Սուխարայ վանքում Արճէշ քաղաքի մերձակայ Յիսնայ անապատում՝ այսինքն այն վանքերում, ուր արգարե գեղերած է Գր. Խլաթեցին իւր վանահայրութիւնից առաջ՝ յատկապէս 1385—1400 թուերին: (Տես մեր Նախարանը, «Արարատ», Անդ. էջ 174.)—Բուն Ողորդ կամ Տաղը — «Նկայք ողբասցուք, եղբարք, դարութիւն ազգին Նետողաց ...» բաղկացած է 58 տողից և նուիրուած է Ախթամարի Զաքարիա կաթողիկոսի եղբերագականնահաստակութեան «պիղծ ամբրայի» ձեռքից, որ միւս անգամ նկարագրել է նոյն Խլաթեցին արձակ ոճով իւր Յայսմաւուրքի մէջ (26 ին յունիսի):—Ողորի տողերի սկզբնատառերը կազմում են Նրզս այս Գրիգորի է վասն Զաքարիա Կաթողիկոսին Ախթամարայ:—Նկատելու է նոյնպէս որ Աւետարանի յիշատակարանի սկզբումն էլ գնում է Խլաթեցին իւր պատմական վիպասանութեան վերջում յիշուած նման մի փոխարեութիւն՝ հիմնուած այլուրեւի վերայ, որի իմաստը հաւասարապէս մտած է մեզ համար:—

«Ինքն գիտէ Տէրն կայուն
 «Որ ի յայրէն մինչև ի նուն
 «Ոչ է կարած գրիս ի բուն»:
 Գր. ԽԱԼԱԹԵԱՆ.

ՀԱՄԱՌՈՏՈՒԹԻՒՆ

ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ ԿՈՅՈՐՆԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

ԱԹԽԱՏՈՒԹԻՒՆ Հ. ԳԵԼՏԵՐԻ.

(Շարունակութիւն) *



527 թ. օգոստոսի 1-ն մեռաւ Յուստինը և Յուստինիանը (527—565) բապէս միապետ դարձաւ: Յուստինիանի կառավարութիւնը բիւզանդական պատմութեան մէջ կազմում է կարեւոր յեղաշրջան. Արեւելահայաստանի պետը նորից փորձում է զրաւել արեւմտեան տէրութիւնը, որ իրել էին Գերմանացիները, և վերականգնել նախկին տիեզերական միասնութիւնը: Աննկուն հեռեւորութիւնը, որով նա իւր կառավարութեան ամբողջ ժամանակամիջոցում առաջ տարաւ իւր աշխարհակալական ճրագիրը, վերջ ի վերջոյ յաջողութեամբ պատկուեց և նրա անունը մեծացրեց յետագայ սերունդների առաջ: Սակայն տիրապետութեան այդ յանդուգն քաղաքականութիւնը վեր էր տէրութեան զինուորական և արնտեսական սլծերից և զա էր իսկապէս հիմքը՝ որ յետագայ դարերում քայքայուած անխուսափելի դարձաւ: Արեւելահայաստան այս ասոնուած կայսեր թէ արտաքին և թէ նկեղեցական քաղաքականութիւնը հաւասարապէս մնաստակար էր և կործանիչ տէրութեան համար:

Պատերազմները, որ մղում էին զլսաւորապէս օտար երկրներից վարձուած զինուորներիով, կայսրից պահանջում էին ահագին միջոցներ: Անաստասի հարուստ զանձարանը դատարկուել էր մասամբ Յուստինի ժամանակի որ օչ մի կերպ անտեսաբար չէր կառավարում և մանաւանդ նրա եղբորորդու շապլելովը որ ուզում էր ժողովրդեան համակրանքն իրան գրաւած ունենալ: Մեծածախս կառավարութեան միշտ աճող կարիքներին ստիպուած էր բաւարարութիւն աւելիլեմտից ղեկավար

1 Սեպ. 1897 թ. Մոսկուա.

* Տես Արարատ 1897 թ. եր. 351.